ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ «ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ» ԽԱԽՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՇՈՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Տնտեսագիտության հիմնական դպրոցների ներկայացուցիչների կարծիքները *իշխանության* հիմնախնդրի վերաբերյալ տրամագծորեն տարբերվում են: Որոշակի իմաստով իրավացի է Վ. Դեմենտևը, երբ նշում է, որ չնայած *իշխանության* հիմնախնդիրը քաղաքական և սոցիոլոգիական գիտություններում վերլուծության գլխավոր օբյեկտներից մեկն է, այն դեռևս այդպիսին չի դիտարկվում տնտեսական գիտություններում[1]:

Նորդասական տնտեսագիտական դպրոցի (mainstream economic) ներկայացուցիչները մերժում են տնտեսական վերլուծությունում այս հիմնախնդրի ներառումը (բացառությամբ *մենաշնորհային իշխանության* հիմնախնդրի): Այլ կերպ ասած՝ նրանց կողմից ներկայացվող կատարյալ մրցակցության մոդելը հաշվի չի առնում իշխանության գործոնը: Այսպիսի մոտեցումը բացատրվում է նրանով, որ նորդասական տնտեսագիտության դպրոցը ներկայացնող հեղինակներն իրենց վերլուծություններում գրեթե հաշվի չեն առնում հասարակական կյանքի քաղաքական, սոցիալական, մշակութային և այլ ոլորտների դերը: Տնտեսական կյանքում մենաշնորհների և խմբատիրության (օլիգոպոլիա) դերի աճը նախադրյալներ ստեղծեց Է. Չեմբեռլինի[2] և Ջ. Ռոբինսոնի[3] կողմից անկատար մրցակցության թեզի առաջքաշման համար, որի հիման վրա ձևավորվեց ճյուղային շուկաների տեսությունը (գրականությունում դա երբեմն ներկայացվում է նաև որպես արդյունաբերության կազմակերպման տեսություն): Տվյալ մոտեցման էությունն այն է, որ շուկայի որոշ գործակալներ ընդունակ են ամբողջությամբ ազդելու դրա զարգացման և մնացած մասնակիցների վարքագծի վրա (այսինքն՝ իշխանություն ունեն նրանց վրա), ինչը դրսևորվում է անուղղակիորեն և, որպես կանոն, որոշ գործակալների կողմից գների վրա ազդեցության միջոցով:

Տնտեսական կյանքում գոյություն ունեցող «իշխանություն» երևույթին փորձել են համակարգային բացատրություն տալ մարքսիստների և ինստիտուցիոնալիստների դպրոցների ներկայացուցիչները, որոնց Կ. Ռոտշիլդը բնութագրում է որպես իշխանությանը հակված տնտեսագետներ (power-minded economists and schools)[4]: Նրանք այս հիմնախնդրին մոտեցել են որպես տնտեսական վերլուծության առարկայի, իսկ «իշխանություն» երևույթը դիտարկել են որպես հասարակության տնտեսական կյանքի վրա էական ազդեցություն ունեցող գործոն: Նրանց տեսանկյունից՝ տնտեսական իշխանության հիմնախնդիրը գոյություն է ունեցել միշտ, անկախ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման փուլից: Հետևաբար՝ տնտեսական իշխանության համակարգի կազմակերպումը միշտ

---

[1] Տե՛ս **Дементьев В.В.**, Экономика как система власти. Донецк, 2003:

[2] Տե՛ս **Чемберлин Э.,** Теория монополистической конкуренции (Реориентация теории стоимости). М., „Экономика”, 1996:

[3] Տե՛ս **Робинсон Дж.,** Экономическая теория несовершенной конкуренции. М., „Прогресс”, 1986:

[4] Տե՛ս **Rothschild K.,** Introduction // Power in Economics. Ed. by K.W.Rothschild. Harmondworth: Penguin, 1971, էջ 15:

արդիական հիմնախնդիր և հետազոտության առարկա է: Համարելով, որ տնտեսագիտությունը ճշգրիտ՝ մաթեմատիկական գիտություն չէ, մենք նույնպես կարևորում ենք տնտեսական կյանքում քաղաքական, սոցիալական և այլ գործոնների դերը: Այս իմաստով, տնտեսական հետազոտությունը, որը հաշվի է առնում վերը նշված գործոնների ազդեցությունը և դա չի հանգեցնում միայն թվերի և մոդելների ներկայացմանը, շատ ավելի մեծ արժեք ունի: Իսկ իշխանության հիմնախնդիրը սերտորեն կապված է այդ գործոնների հետ և հասարակական գիտություններում առանցքային տեղ է զբաղեցնում: Ուստի տնտեսական հետազոտությունները չպետք է շրջանցեն այս չափազանց կարևոր հիմնախնդիրը:

Գերմանացի տնտեսագետ Վ. Օյքենը (տնտեսական կարգերի տեսության հիմնադիր) նշում է. «Ազգային տնտեսության առաջին խնդիրը որոշակի փաստերի բացահայտումն է, որոնք հիմնավորում են տնտեսական իշխանությունը, և տնտեսական իշխանության իրական ազդեցության հետազոտությունը»[5]: Ֆրանսիացի հայտնի տնտեսագետ Ֆ. Պերուի աշխատանքներում (սոցիալ-ինստիտուցիոնալիզմի տեսություն) իշխանությունը դիտվում է որպես տնտեսական կյանքի հիմնարար սկզբունք: Ըստ նրա՝ «....տնտեսական կյանքը տարբերվում է փոխանակման ցանցից: Այն, ավելի շուտ, ներկայացնում է ուժերի ցանց: Տնտեսությունը ձգտում է ոչ միայն օգուտի, այլև իշխանության»[6]: Այսպիսով՝ Ֆ. Պերուի տեսանկյունից, տնտեսական իրականությունը բազմաթիվ ակնհայտ կամ թաքնված իշխանության հարաբերությունների ցանց է, ոչ հավասար ուժերի, այսինքն՝ գերիշխող և ենթակա գործընկերների միջև փոխգործակցության ցանց: Հավասարների տնտեսության մոդելին նա հակադրում է տնտեսական պայքարի կամ անհավասար տնտեսական գործակալների տնտեսական իշխանության տեսությունը[7]:

Տնտեսական իշխանության վերլուծության ժամանակակից փուլը սերտորեն կապված է ինստիտուցիոնալիզմի մեթոդաբանության զարգացման նոր միտումների հետ: Այս ուղղության ներկայացուցիչների (Ջ. Գելբրեյթ[8], Յա. Տակատա[9], Է. Տոֆլեր[10], Ռ. Հոլթոն[11], Գ. Ալբերտ[112] և ուրիշներ) գիտական աշխատանքներում տնտեսական իշխանության երևույթը ստանում է համակարգային գնահատական և ամրագրվում է որպես տնտեսագիտական տեսության կողմից ուսումնասիրվող հիմքային հարաբերություն: Ըստ ամերիկացի հեղինակ Է. Տոֆլերի՝ իշխանությունը արտադրության գործընթացի անխուսափելի մասն է, և դա ճշմարտություն է բոլոր տնտեսական համակարգերի համար՝ կապիտալիստական, սոցիալիստական և ընդհանրապես՝ ինչպիսին էլ լինեն[213]: Է. Տոֆլերը նշում է, որ «ամբողջ մարդկային կյանքը ավելի շուտ հանգում է իշխանական, քան դրամական հարաբերությունների»[14]: Այսպիսով՝ իշխանության հարաբերությունները հատկանշական են բոլոր հասարակական համակարգերին և մարդկային փոխհարաբերություններին: Իշխանությունը որոշակի երևույթ չէ, բայց դա մարդկանց միջև գոյություն ունեցող բոլոր հարաբերությունների (առանց բացառության) կողմ է, ուստի անխուսափելի է և չեզոք: Հետևաբար՝ դրանում չկա ոչ լավ բան, ոչ վատ բան[3 15]: Ռ. Հոլթոնի կարծիքով՝ տնտեսական հարցերը միշտ պետք է

---

[5] **Ойкен В.**, Основы национальной экономики. М., „Экономика”, 1996, с. 337.
[6] **Perroux F.,** The Domination Effect and Modern Economic Theory // Power in Economics // Ed. by K.W. Rothschild. - Harmondworth: Penguin books, 1971, p. 56.
[7] Տե՛ս **Bocage D.**, General Economic Theory of Fracois Perroux. Lahman: University Press of America, 1985, էջ 30:
[8] Տե՛ս **Гэлбрэйт Дж.К.,** Экономические теории и цели общества. М., „Прогресс”, 1976:
[9] Տե՛ս **Takata Y.,** Power Theory of Economics. New York: St. Martins Press, 1995:
[10] Տե՛ս **Тоффлер Э.**, Метаморфозы власти. М., Издательство „АСТ”, 2001, էջ 669:
[11] Տե՛ս **Holton R.,** Economy and Society. London: Routledge, 1992:
[12] Տե՛ս **Albert H.,** The Neglect of Sociology in Economic Science // Power in Economics. Ed. By K. Rothschild. Harmondworth: Penguin books, 1971, էջ 21-35:

[13] Տե՛ս **Тоффлер Э.,** նշվ. աշխ., էջ 53:
[14] Նույն տեղում, էջ 55:
[15] Տե՛ս նույն տեղը, էջ 574:

քննարկվեն իշխանության հարաբերությունների համատեքստում, անկախ այն բանից՝ հաստատվո՞ւմ են տնտեսական և քաղաքական մեխանիզմների միջոցով: Ըստ նրա՝ այդպիսի մոտեցումը միավորում է քաղաքատնտեսության բոլոր նրբերանգները[16]: Գ. Ալբերտը, կարևորելով տնտեսական կյանքի սոցիալական կողմը, իշխանության հիմնախնդիրը դիտարկում է իբրև «տնտեսության՝ որպես սոցիալական գիտության գերիշխող հարց»[17]:

Մեր ժամանակներում, հասարակության տնտեսական կյանքի բարդացման գործընթացներին զուգահեռ, տնտեսական իշխանության սուբյեկտների կառուցվածքը բազմազանեցվել է, իսկ հիմնախնդրի մասշտաբները մեծացել են: Դրա հետ կապված՝ այս հիմնախնդիրը մտել է այլ հայեցակարգերի հետազոտության դաշտ: Մասնավորապես՝ տնտեսական իշխանության շարժիչ ուժերը, բաշխումը և վերաբաշխումը, դրա հաշվեկշիռը և աստիճանակարգումը ներառվել են ժամանակակից գլոբալիստիկայի և տնտեսական անվտանգության ապահովման տեսություններում: Վերջինիս շրջանակներում տնտեսական իշխանության հիմնախնդրի առանձին տեսակետներ հետազոտության առարկա են ազգային շահերի դպրոցի ներկայացուցիչների (Հ. Մորգենթաու, Վ. Վոլֆերզ և ուրիշներ) աշխատանքներում:

Իշխանության հիմնախնդրի առկայությունը ենթադրում է, որ հավասարությունը իրական տնտեսական կյանքում վերացական գաղափար է, և դա ավելի շուտ կարելի է ընդունել որպես բացառություն, քան կանոն: Այս իմաստով ոչ թե իշխանության բացակայությունը, այլ հենց դրա առկայությունը պետք է դիտել որպես հասարակության տնտեսական կազմակերպման «բնական վիճակ»: Տնտեսական իշխանության ձևավորման ներքին տրամաբանությունը պայմանավորված է տնտեսական սուբյեկտների՝ կապիտալի համակենտրոնացման և շահույթն առավելագույնի հասցնելու հակմամբ: Սուբյեկտների միջև այսպիսի տրամաբանությամբ պայքարը հանգեցնում է տնտեսական իշխանության որոշակի համադասավորության (կոնֆիգուրացիայի) ձևավորմանը:

Մյուս կողմից՝ ըստ տնտեսագետ-ինստիտուցիոնալիստների, ցանկացած իշխանություն պետք է վերահսկվի: Հասարակության տնտեսական կազմակերպման կառուցվածքից են կախված սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգի որակը և զարգացման հնարավորությունները: Հետևաբար՝ տնտեսական իշխանության ներսում մշտապես գոյություն ունեցող հակասությունները, պայքարը, հակամարտությունը և բախումները անհրաժեշտություն են դարձնում այդ իշխանության համար պայքարի՝ հասարակական առումով ընդունելի միջակայքի ձևավորումը դրա բաշխման տնտեսապես անվտանգ ձևերի և սահմանների որդեգրման ճանապարհով: Այդ կապակցությամբ ինստիտուցիոնալիստներն առաջ են քաշում, այսպես կոչված, «իշխանության հասարակական անհրաժեշտ կարգի» («socially necessary order») հայեցակարգը: Վ. Օյքենը կարծում է, որ իշխանության հիմնախնդիրը պետական տնտեսական քաղաքականության առաջին սկզբունքն է[418]: Հարցն այն է, թե ինչպիսի իշխանության համամասնություններով պետք է օժտված լինեն տնտեսական սուբյեկտները, և ինչ նպատակների ձեռքբերմանը պետք է ուղղված լինի նրանց գործունեությունը: «Եվ ավելցուկային, և ոչ բավարար իշխանությունները հանգեցնում են սոցիալական ահավոր հետևանքների»,- նկատում է Է. Տոֆլերը[19]:

Այսպիսով՝ ինստիտուցիոնալիստների համար կենտրոնական տնտեսական հիմնախնդիրը տնտեսության կազմակերպումն ու վերահսկումն է: Իրենց հերթին, տնտեսության կազմակերպման և վերահսկման առանձնահատկությունները մեծապես կախված են դրա կառուցվածքից: Եթե տնտեսության բարդ կառուցվածք ունեցող

[16] Տե՛ս **Holton R.,** նշվ. աշխ., էջ 142:
[17] **Albert H.,** նշվ. աշխ., էջ 28:
[18] Տե՛ս **Ойкен В.**, նշվ. աշխ., էջ 427:
[19] **Тоффлер Э.**, նշվ. աշխ., էջ 577:

ժամանակակից արևմտյան պետություններում խոշոր կապիտալի իշխանությունը զսպվում է բազմաթիվ սեփականատերերի միջև մրցակցությամբ, մեծաքանակ միջին դասի և հասարակության քաղաքական ազդեցությամբ, ապա պարզունակ տնտեսություն ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, տնտեսական իշխանության համակենտրոնացումը ստեղծում է պլուտոկրատիա (ուղղակի քաղաքական կառավարում հարուստների ոչ մեծ խմբի կողմից) հաստատելու վտանգ: Այսպիսի երկրներում գոյություն չունեն զգալի հնարավորություններ հարուստների և միջին դասի (որը չափազանց թույլ է) միջև տնտեսական իշխանության վերաբաշխման համար: Եվ, առանց կառուցվածքային լուրջ վերափոխումների, իշխանության հասարակական անհրաժեշտ կարգի ձևավորումն անհնար է դառնում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ իշխանության համակարգի տեսանկյունից էական նշանակություն են ստանում որոշ հիմնարար հարցերի պատասխաններ: Եթե այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են ո՞վ, ո՞ւմ նկատմամբ, ի՞նչ չափով, ի՞նչ սահմաններում և ինչպիսի՞ եղանակով է իրականացնում իշխանությունը, համընդհանուր են, ինչ-որ կերպ պարզաբանված են տարբեր հեղինակների կողմից կամ ակնհայտ են, ապա՝ տնտեսական գործունեության ի՞նչ տեսակներ է սահմանափակում իշխանությունը, ո՞ւր է ուղղում իշխանությունը ռեսուրսները, ինչպիսի՞ հնարավորություններ է ստեղծում, առանձնահատուկ են յուրաքանչյուր երկրի համար: Հետևաբար՝ այդ հարցերի պատասխանները պահանջում են փաստերի և տվյալ պատմական պահի որոշակի իրավիճակների վերլուծություն, ավելի խոր և հիմնարար բացատրություններ:

Նշված մոտեցմամբ վերլուծելով Հայաստանի ներկայիս տնտեսական համակարգը՝ պարզում ենք, որ մեր երկրում ստեղծվել է տնտեսական կյանքի կազմակերպման անարդյունավետ հավասարակշռություն, ինչը, իր հերթին, մեր տնտեսության պարզունակ կառուցվածքի արդյունք է: Քանի որ մեկ հոդվածի շրջանակներում չափազանց բարդ է մանրամասն անդրադառնալ այսպիսի ընդգրկուն թեմայի բոլոր հարցերի քննարկմանը, փորձենք ներկայացնել ստեղծված իրավիճակի հիմնական բնութագրիչ գծերը և սեղմ ձևակերպել իրավիճակի փոփոխության համար անհրաժեշտ քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքները: Ներքոշարադրյալը ավելի շուտ կպարունակի հաստատումներ, որոնք կատարել ենք հարցերի լայն շրջանակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

Հայաստանի տնտեսությունն ունի պարզունակ կառուցվածք: Արդեն 1990-ական թվականների կեսերին հիմնավորապես վերացվեցին Հայաստանի արդյունաբերության մեքենաշինական և քիմիական համալիրները, իսկ գյուղատնտեսական համալիրը զանգվածային մասնավորեցման ճանապարհով փոշիացվեց ավելի քան 300 հազար մանր տնտեսությունների միջև: Պետական հատվածի և, ընդհանուր առմամբ, սոցիալ-տնտեսական համակարգի գոյատևումը մեծ չափով կախվածության մեջ ընկավ միջազգային կազմակերպությունների վարկերից, օտարերկրյա օգնությունից և մասնավոր տրանսֆերտներից: Տնտեսության և հասարակության պարզունակացման գործընթացն իր տրամաբանական ավարտին հասավ 2010-ական թվականների կեսերին: Այդ տարիներին, մեր կարծիքով, պետական սեփականության չափազանց անարդյունավետ մասնավորեցման պատճառով վերջնականապես ձևավորվեց տնտեսական իշխանության գործող մոդելը և, որպես դրա հետևանք՝ անարդյունավետ տնտեսական համակարգը: Այդ համակարգը շարունակում է գործել առ այսօր՝ նոր պայմաններին բնորոշ ավելի մեծ կենտրոնացման միտումներով:

Կասկածից վեր է, որ Հայաստանում ձևավորված տնտեսական իշխանությունը ավելցուկային է ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների: Տնտեսական իշխանության այդպիսի ավելցուկը ստեղծել է անարդյունավետ գործունեության

«ավելցուկային» և արդյունավետ գործունեության «ճնշված» դրդապատճառներ։ Իշխանության ավելցուկը պայմանավորում է տնտեսական գործակալի կողմից ռենտային եկամուտների (գերշահույթի) ստացում, այսինքն՝ լրացուցիչ եկամտի ստացում տնտեսական համակարգում՝ ժամանակի տվյալ պահին իր ունեցած ավելցուկային իշխանության հաշվին։ Տնտեսական իշխանության այդպիսի ավելցուկը դրսևորվում է հարկերի չվճարման, ներմուծման ոչ ֆորմալ քվոտաների տիրապետման, մտացածին (ֆիկտիվ) մրցույթներ շահելու, հանքերի և ամենաբերրի հողերի վերահսկման, իջեցված գներով գյուղատնտեսական մթերքների ձեռքբերման պայմանագրերի կնքման և այլ ձևերով։ Արդյունքում՝ տնտեսական իշխանության ավելցուկը հանգեցնում է ծախքերի «տեղաշարժի» իշխանության սուբյեկտից դեպի օբյեկտ՝ ամենուր ստեղծելով աշխատանքի կոշտ շահագործում։ Բնական է, որ տնտեսական իշխանության այդպիսի համակարգը անարդար է նաև եկամուտների բաշխման տեսանկյունից։ Դա մի համակարգ է, որտեղ փաստացի բացակայում են մարդուն առնչվող ծախքերը, այսինքն՝ առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության ոլորտի ծախքերը։ Այս առումով հատկանշական է Ս. Բրաունի հետևյալ ընդգծումը. «....իշխանությունը որոշիչ գործոն է նյութական պարգևատրման հարցում անհավասարության բացատրության համար, բաշխման տեսությունը պետք է անբաժանելի լինի իշխանության տեսությունից»[20]։

Բացի այդ, նման համակարգը բնորոշ է թույլ զարգացած հասարակությանը, որտեղ տնտեսական իշխանության սուբյեկտ-կրողների փոքր խմբի և հասարակության հիմնական աղքատ զանգվածի միջև չկա ոչ մի միջանկյալ սոցիալական խումբ, որն ընդունակ լինի իր միջավայրից առանձնացնելու արդյունավետ գործող տնտեսական և քաղաքական խմբեր։ Տնտեսական գործակալների կողմից սուբյեկտիվ օգուտներն առավելագույնի հասցնելու անսահմանափակ ձգտման պայմաններում, գործող կենտրոնացված քաղաքական համակարգը ավելի շուտ նպաստում է այդ իշխանության ամրապնդմանը, քան դրա թուլացմանը և բաշխմանը։ Կրթության ցածր մակարդակը ստեղծում է թույլ մտավորական միջավայր, որտեղ սրությամբ զգացվում է որակավորված աշխատողների, կառավարիչների, տեխնիկական կադրերի և աշխատուժի անբավարարությունը։ Այդպիսի համակարգը հանգեցրել է նրան, որ զարգացման հիմնախնդիրները ստացել են ոչ միայն տնտեսական, այլև հումանիտար և մարդկային բնույթ։

Այսպիսով՝ տնտեսական գործակալները, որոնք օժտված են ավելցուկային իշխանությամբ, ստանում են ռենտային եկամուտ, որը և Հայաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական համակարգի ամբողջ իմաստն է։ Իշխանության ռենտան կարևոր հանգամանք է այդ մոդելի հասկացման և պահպանման համար, և ընդհակառակը՝ ռենտայի վերացումը դրա փոփոխությանն ուղղված առաջին քայլն է։

Տնտեսական ռեսուրսներն ուղղվում են գործունեության անարդյունավետ ոլորտներ, ինչի արդյունքում ստեղծվում է տնտեսական իշխանության համակարգի անարդյունավետ հավասարակշռություն։ Ռենտային համակարգի վրա հիմնված իշխանությունը չի խրախուսում ներդրումները գործունեության այլ՝ ավելի բարդ տեսակներում, քանի որ դրանց ծախքերը և փոխհատուցման նորման բարձր են։ Այս իրավիճակում անիմաստ են արդյունաբերական քաղաքականություն իրականացնելու, առավել ևս նորարարական տնտեսություն ստեղծելու մասին խոսակցությունները։ Գործունեության ոչ բարդ ոլորտներում գերշահույթներ ստանալու պայմաններում բացակայում են բոլոր տեսակի խթանները տնտեսության արտահանման կողմնորոշում ունեցող ճյուղերի զարգացման համար, բացառությամբ՝ հումքի վաճառքի, ինչը լիովին բացատրելի է օգտակար հանածոների համաշխարհային գների աճի համայնապատկերում և իշխանությամբ պայմա-

[20] **Brown C.,** Is There an Institutional Theory of Distribution? // Journal of Economic Issues. 2005. Vol. XXXIX. No. 4, December, p. 920.

նավորված ռենտայի ստացման տեսանկյունից: Պղնձի, մոլիբդենի և ոսկու արդյունահանումն ու վաճառքը վերջին տարիներին աճում են աննախադեպ ծավալներով: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ տվյալ ճյուղերում գոյություն ունի շուրջ 100%-անոց շահութաբերություն: Հումքի վաճառքը Հայաստանի արտահանման հիմնական հոդվածն է, նշանակում է նաև արտարժույթի ստացման հիմնական ներքին աղբյուրը: Բայց, միաժամանակ, ճյուղն ապահովում է պետական բյուջեի եկամուտների չնչին մասը, իսկ ռեսուրսների շահագործումից ստացված եկամուտը վերածվում է նոր ներդրումների նոր հանքահորերում՝ ամայացնելով մեր հայրենիքի ընդերքը, աղտոտելով ջրի աղբյուրները և հողերը վերածելով անբերրի տարածքների: Ուրիշ ո՞ր ճյուղը, արտադրությունը կամ գործունեության տեսակը կարող է ապահովել այդպիսի եկամուտներ: Բնականաբար՝ ոչ մի: Իսկ դա նշանակում է, որ տվյալ ճյուղում ստեղծված իրավիճակը լուրջ արգելք է տնտեսության բազմազանեցման համար:

Վերջին ժամանակներս, սննդամթերքի հիմնական տեսակների գների աճի առումով, գյուղատնտեսության թեման դարձել է ամենաարծարծվողը: Բայց ոլորտի ի՞նչ զարգացման մասին կարող է խոսք լինել այնպիսի ձևախեղված համակարգի դեպքում, որտեղ իշխում է տնտեսական իշխանությունը. միայն տնտեսականը՝ դրա «ավելցուկային ձևով»: Բոլոր քիչ թե շատ բարեբեր հողերը գտնվում են տնտեսական իշխանության ավելցուկով օժտված նույն տնտեսական գործակալների ձեռքերում, որոնք էլ, ըստ էության, յուրացնում են ամբողջ դիֆերենցիալ ռենտան: Հողագործության ինչպիսի՞ արտադրողականություն կարող է լինել հազարավոր մանր կտորների բաժանված հողի վրա՝ համապատասխան ենթակառուցվածքների և կապիտալ ներդրումների բացակայության պայմաններում: Թերևս դա էլ այն հիմնական պատճառն է, որ գյուղատնտեսական հողերի մեծ մասը մնում է չմշակված: Այսօր շահութաբերությամբ օգտագործվում են միայն ամենաբերրի հողակտորները, որոնք ապահովում են հողային ռենտայի ստացում, այն էլ գյուղացիների չափազանց բարձր աստիճանի շահագործման, այլ ոչ թե լուրջ կապիտալ ներդրումների և տնտեսության կազմակերպման ժամանակակից մեթոդների կիրառման հաշվին: Այս ճյուղում գոյություն ունի առանձնահատուկ, կառուցվածքային բնույթի գործազրկություն: Առանց այդ հրատապ և պետականությանը սպառնացող հիմնախնդրի լուծման անհնար է պատկերացնել լուրջ զարգացում գյուղատնտեսության հատվածում: Բայց լուծելի՞ է արդյոք կառուցվածքային գործազրկության հիմնախնդիրը տնտեսավարման ներկայիս պայմաններում, երբ զարգանում են անարդյունավետ գործունեության ոլորտները և չկան նոր աշխատատեղերի ստեղծման խթաններ:

Ինչ վերաբերում է անասնաբուծությանը, ապա ճյուղը զարգանում է հիմնականում էքստենսիվ ճանապարհով, որի բնական հնարավորությունները շատ սահմանափակ են: Սահմանափակող գործոն են նաև բնակչության ցածր վճարունակությունը, մսի և կաթի գնման ցածր գները: Գործունեության որոշ տեսակներ, օրինակ՝ արհեստական ձկնաբուծությունը, շահութաբեր են մնում բացառապես արտեզյան ջրային ռեսուրսների անսահմանափակ և անվերահսկելի օգտագործման հաշվին:

1995-2008 թթ. ընթացքում տնտեսական աճի ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտներում: Այսպես՝ 2001-2008 թթ. շինարարության կշիռը ՀՆԱ 10%-ից հասավ մինչև 27%-ի: Շինարարությունը ապահովում էր տնտեսական աճի մոտ 1/3-ը, այսինքն՝ ավելի, քան արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը միասին վերցրած[21]: Շինարարության հատվածի աճը պայմանավորված էր տնտեսական աստիճանակարգման վերին օղակներում դրամական միջոցների որոշակի ավելցուկով: Վերնախավը շահագրգռված և ընդունակ չէ կազմակերպելու գործունեության արդյունավետ տեսակներ: Հասարակությունը, որտեղ թագավորում է տնտեսական

[21] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարեգրքեր՝ 2002 և 2009:

իշխանությունը, ունի սպառողական հոգեբանություն, ինչը հատկապես բնորոշ է իշխանության վերնախավին: Հայտնի է, որ ծախքերի և օգուտների մեծությունը ազդում է գների մակարդակի վրա և ձևավորում է մի կողմից՝ բարիքների նկատմամբ պահանջարկը, իսկ մյուս կողմից՝ դրանց առաջարկը: Այդ պատճառով, այնպիսի ոլորտում, ինչպիսին էլիտային շինարարությունն է, ձևավորվում են հատուկ բարձրացված և «պղպջակային» գներ: Դա իր հերթին ազդում է անշարժ գույքի շուկայի ընդհանուր իրավիճակի վրա: Գնագոյացման այդպիսի ձևը բնութագրական է նաև ապրանքների և ծառայությունների մի շարք այլ տեսակների համար:

Հարկ է նշել, որ վերջին տասնամյակի տնտեսական աճի պարագայում մեծ նշանակություն են ունեցել մասնավոր տրանսֆերտները, որոնք նախաճգնաժամային 2008 թ. կազմել են 1062.39 մլն դոլար կամ ՀՆԱ շուրջ 9%-ը[22]: Փորձագիտական տվյալների համաձայն՝ վերջին տարիներին Հայաստանի տնային տնտեսությունները արտասահմանից տարեկան ստացել են մոտ 1,5 մլրդ դոլարի մասնավոր դրամական փոխանցումներ: Այդ դրամական ներարկումները նպաստել են առևտրի և ծառայությունների զարգացման ոլորտում որոշակի մակարդակի պահպանմանը:

Ներկայիս տնտեսական համակարգի գործակալներն, իրենց հերթին, իշխանության օբյեկտ են արտաքին տնտեսական սուբյեկտների համար, այսինքն՝ առկա է արտաքին հարկադրանք: Ենթակառուցվածքային կազմակերպությունները, որոնք ապահովում են տնտեսական համակարգի կենսագործունեությունը (կապի, տրանսպորտի, էներգետիկայի, ջրամատակարարման, գազամատակարարման ոլորտներում), մասնավորեցվել կամ տրվել են անդրազգային կորպորացիաների (հիմնականում՝ ռուսական) կոնցեսիոն կառավարմանը:

Տնտեսական իշխանության գործող համակարգին բնորոշ է այնպիսի ֆիսկալ համակարգ, որը նվազագույնի է հասցնում պետության իշխանությունը: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունում երկար տարիներ է, ինչ էական փոփոխություն չի նկատվում: Եթե հաշվի առնենք, որ գանձվող հարկերի ավելի քան կեսը կազմում են անուղղակիները (որոնք, ըստ էության, վճարում են սպառողները), ապա չենք չափազանցնի, եթե ասենք, որ Հայաստանի ամբողջ տարածքը, հարկերի առումով, ներկայացնում է ոչ ֆորմալ օֆշորային գոտի: Հարկման տեսանկյունից՝ ստեղծված հավասարակշռված վիճակը շահավետ է ոչ միայն «ազգային կապիտալի», այլև անդրազգային կորպորացիաների համար: Դա կարող է հանգեցնել միակարծության (կոնսենսուսի)՝ ամրապնդելով ներկայիս հավասարակշռության անխախտելիությունը:

Օտարերկրյա ներդրումները 2000-2008 թթ. կազմել են մոտ 3 մլրդ դոլար կամ տարեկան, միջին հաշվով, ՀՆԱ 6%-ը[23]: Դրանք հիմնականում ուղղվել են տրանսպորտի, կապի, էներգետիկայի, գունավոր մետալուրգիայի, հանքարդյունաբերության, առևտրի, շինարարության և ծառայությունների զարգացման ոլորտներ: Այդ ներդրումների մի մասը ապահովել է ռուսական և այլ օտարերկրյա ընկերությունների գործունեությունը: Ներդրումների մնացած մասը հիմնականում էթնիկ ծագում ունի: Դրանք առավելապես ռուսական ծագման են: Ռուսաստանն ինքը պարզունակ տնտեսական և սոցիալական կառուցվածք ունի: Այդ երկրի տնտեսության հիմքը հանքահումքային արդյունաբերությունն է կազմում: Ռուսաստանի հայերը մուտք չունեն ռուսական հանքային ռեսուրսների ոլորտ: Մյուս կողմից՝ համաշխարհային շուկաներում էներգառեսուրսների բարձր գները բավական մեծ

[22] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2007 և 2010 թթ.:

[23] Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Ներդրումային քաղաքականություն և արտաքին տնտեսական համագործակցություն.
http://www.mineconomy.am/upload/file/pdfs/INVESTMENTSarm.pdf

արժութային մուտքեր են ապահովում Ռուսաստանի համար, ինչը բարձրացնում է ռուսական հասարակության որոշակի մասի վճարունակությունը և խթանում շինարարության ու առևտրի աճը: Հենց այս ճյուղերում էլ որոշակի եկամուտներ են վաստակում Ռուսաստանի հայերը, և Հայաստանի տնտեսության տվյալ ճյուղեր էլ ուղղվում են նրանց ներդրումները: Վերջին հաշվով, Ռուսաստանում ձեռնարկատիրական գործունեության ոչ բարդ տեսակներից ստացված միջոցները հայրենիքում ներդրվում են գործունեության պարզ, այսպես կոչված, «անարդյունավետ ոլորտներում»:

Այսպիսով՝ կարելի է հաստատել, որ տնտեսական իշխանության ստեղծված համակարգը բացասաբար է ազդում տնտեսական գործակալների (տնտեսական վարքագծի որոշակի տեսակների հրաժարման և այլընտրանքի առումով) և, ընդհանուր առմամբ, Հայաստանի սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման վրա: Ձևավորված տնտեսական համակարգը չի նպաստում որևէ ընդհանուր պետական նպատակի իրագործմանը, այլ միտված է տնտեսական սուբյեկտների օգուտների աճին:

Արդյունքում՝ ստեղծվել է տնտեսական իշխանության համակարգի անարդյունավետ հավասարակշռություն, որի համար բնութագրական են տնտեսության պարզունակ կառուցվածքը, կախվածությունը արտաքին ֆինանսական աղբյուրներից, ձևախեղված ֆիսկալ համակարգը: Բոլոր այս գործոնների ընդհանրությունը չի կարող ապահովել երկարաժամկետ և կայուն զարգացում և խոցելի է դարձնում Հայաստանի տնտեսական ու քաղաքական համակարգը:

Ինչպես արդեն նշվել է, տնտեսական իշխանությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Քաղաքական տեսանկյունից այն կարող է պոզիտիվ կամ նեգատիվ դեր խաղալ: Առաջին դեպքում կապահովվի մասնավոր տնտեսական վարքագծի ենթարկվածությունը ընդհանուր նպատակներին՝ նպաստելով ազգի տնտեսական զարգացմանը: Երկրորդ՝ տնտեսական իշխանությունը կարող է հետապնդել միայն տնտեսական սուբյեկտների օգուտներն առավելագույնի հասցնելու նպատակ՝ դրան այլ մարդկանց գործունեության նպատակները ենթարկեցնելու հաշվին: Այս դեպքում այն բացասական դեր է կատարում՝ ստեղծելով ազգային տնտեսության անարդյունավետ համակարգ:

Ստեղծված անարդյունավետ հավասարակշռության խախտման համար հարկավոր է փոխել տնտեսական իշխանության կազմակերպական համակարգը: Արդյունավետ տնտեսական իշխանությունը չի ստեղծվում ինքն իրեն: Անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային քաղաքականություն, ինչը ենթադրում է սուբյեկտիվ իշխանության և օգուտն առավելագույնի հասցնելու արդյունքում ձևավորված տնտեսական իշխանության վերաբաշխում: Իսկ դրա համար հարկ է փոխել տնտեսական խաղի կանոնները: Դրանք կարող են փոխվել նոր տնտեսական կազմակերպությունների («խաղացողների») ստեղծման և դրանց տնտեսական իշխանության պակաս մասի ծածկման միջոցով: Տնտեսական տեսանկյունից սա նշանակում է՝ գործունեության արդյունավետ տեսակների համար ծախ-քերի ծավալի մինիմալացում և դրանց մաքսիմալացում (հարկերի օգնությամբ) գործունեության անարդյունավետ տեսակների դեպքում:

Այսօր գործունեության արդյունավետ տեսակների գործադրման համար գոյություն ունի «իշխանության պակաս»: Օրինակ՝ նորարարությունների նկատմամբ ընկալունակությունը վկայում է իշխանության համակարգի արդյունավետության մասին: Եթե համակարգը սահմանափակում է նորարարական գործունեությունը, ուրեմն տնտեսական իշխանությունը անարդյունավետ է բաշխված, իսկ քաղաքական համակարգը թույլ է անկախ պետական քաղաքականություն իրականացնելու առումով:

Իշխանության ստեղծման և արդյունավետ բաշխման քաղաքականության իրականացումը ենթադրում է նաև տնտեսական իշխանությամբ օժտված սուբյեկտների իրավունքների և պատասխանատվության այնպիսի փոփոխություն, որ ստեղծվի իշխանության հասարակական անհրաժեշտ կարգ, ինչն էլ, ըստ էության, պետության տնտեսական քաղաքականության նպատակն է ու առարկան։

Տնտեսական իշխանության համակարգում որպես վերափոխումների նախաձեռնող կարող են հանդես գալ այն սուբյեկտները, որոնք ունեն իշխանական գործառույթների կենտրոնացման անհրաժեշտ ներուժ։ Սակայն ներկա պայմաններում, երբ առկա է անարդյունավետ հավասարակշռության խախտման և տնտեսական գործունեության արդյունավետ տեսակների ստեղծման ու խթանման անհրաժեշտություն, իշխանության վերաբաշխման գործընթացներում որպես առավել համարժեք և նախաձեռնող սուբյեկտ կարող է հանդես գալ պետությունը՝ միայն իրեն հատուկ սոցիալ-տնտեսական գործառույթների տեսանկյունից։

Բացի այդ, միայն պետությունն է, որ այս կամ այն չափով տիրապետում է իշխանության գրեթե բոլոր ռեսուրսներին (տնտեսական, սոցիալական, մշակութային-տեղեկատվական և ուժային) և կարող է դրանք օգտագործել համալիր ձևով՝ ստեղծված անարդյունավետ հավասարակշռությունը փոխելու նպատակով։ Ժամանակակից պետություններն ունեն մեծ սոցիալական իշխանություն. սոցիալական քաղաքականության միջոցով կարող են ազդել բնակչության լայն շերտերի հասարակական վիճակի վրա՝ դրանով իսկ ապահովելով նրանց չեզոքությունը (լոյալությունը) և աջակցությունը։